ԱՐՁԱՆԱԳՐՈՒԹՅՈՒՆ N 7

Բժշկական սարքավորումների ձեռքբերման «ԵՔ-ԷԱՃԱՊՁԲ-19/11» ծածկագրով գնման ընթացակարգի հանձնաժողովի նիստի

ք. Երևան

20.12.2018թ
Ժամը՝ 11:30

Մասնակցում էին
Հանձնաժողովի նախագահ՝ Կ. Բաբինյան
Հանձնաժողովի անդամներ՝ Գ. Անտոնյան, Տ. Սարգսյան
Հանձնաժողովի քարտուղար՝ Ա. Համբարձումյան

1-ին տեղ զբաղեցրած մասնակիցների կողմից ներկայացված փաստաթղթերի և դրանցում առկա անհամապատասխանությունների մասին

(Կ. Բաբինյան)

1. Ընդունել ի գիտություն որ,

1.1 Ընթացակարգի 1-ին տեղ զբաղեցրած մասնակիցների կողմից սահմանված ժամկետում ներկայացվել է իրենց որակավորումը հավաստող հրավերով պահանջվող փաստաթղթերը-

-**«Զորաշեն» ՍՊԸ**-ի կողմից ներկայացված որակավորման փաստաթղթերը համապատասխանում են հրավերի պահանջներին,

-**«Կոնցեռն-Էներգոմաշ» ՓԲԸ-ի** կողմից էլեկտրոնային աճուրդ համակարգում կցված չէ նմանատիպ պայմանագիր, պայմանագիրը ներկայացվել է էլեկտրոնային կայքի միջոցով: Համաձայն ՀՀ կառավարության 18.04.2017 թվականի թիվ 534-Ն որոշման 19-րդ կետի 4-րդ ենտակետի «4) գնահատող հանձնաժողովի քարտուղարը համակարգի միջոցով ծանուցում է առաջին տեղն զբաղեցրած մասնակցին՝ առաջարկելով ծանուցումն ուղարկելու օրվանից հաշված երեք աշխատանքային օրվա ընթացքում համակարգի միջոցով ներկայացնել որակավորման չափանիշները հիմնավորող՝ հրավերով նախատեսված փաստաթղթերը, բացառությամբ գնումների մասին Հայաստանի Հանրապետության օրենսդրությամբ սահմանված դեպքերի, ինչպես նաև սույն կարգի 11-րդ կետի 3-րդ ենթակետով նախատեսված փաստաթղթերը»,

-**«Յունիմեդ Հայ-Ռուսական ՀՁ» ՍՊԸ**-ի կողմից ներկայացված հայտում բացակայում է նախկինում կատարած պայմանագրի (պայմանագրերի) և դրա հաշիվ ապրանքագրերի պատճենները, պայմանագրի (պայմանագրերի) պատշաճ կատարումը հավաստող ակտի (հանձման-ընդունման արձանագրություն և այլն) պատճենը կամ տվյալ պայմանագրի կատարումն ընդունած կողմի գրավոր հավաստումը:

1.2 Նշված մասնակիցների կողմից սահմանված ժամկետում /մեկ աշխատանքային օր/ արձանագրված անհամապատասխանություններն ուղղելու դեպքում՝ ներկայացված հայտերը կգնահատվել բավարար, հակառակ դեպքում կգնահատվեն անբավարար և կմերժվեն:

Ընդունվել է որոշում՝ կողմ - 3 դեմ - 0:

2. Հանձնաժողովի հաջորդ նիստի անցկացման ժամանակացույցը հաստատելու մասին

(Կ. Բաբինյան)

Հանձնաժողովի հաջորդ նիստը հրավիրել 24.12.2018թ. ժամը 10:40-ին, Երևանի քաղաքապետարանի վարչական շենքում, հասցե՝ ք. Երևան, Արգիշտի փողոց 1:

Ընդունվել է որոշում՝ կողմ - 3 դեմ - 0:

Հանձնաժողովի
Նախագահ՝ ---------- Կ. Բաբինյան
Անդամներ՝ ---------- Գ. Անտոնյան
---------- Տ. Սարգսյան
Քարտուղար՝ ---------- Ա. Համբարձումյան